ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# ԼՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐՆ «ԱՐԵՎԵԼՔ» ԵՎ «ՄԱՍԻՍ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ (1880-ական թթ.)

Իբրև նոր ուղղվածության հրատարակություններ, որոնք սկզբնավորեցին նոր փուլ արևմտահայ լրագրության պատմության մեջ, «Արևելք» թերթը և «Մասիս» շաբաթաթերթը հանդես եկան լրագրական նոր ժանրերով կամ արդեն գործածվող ժանրերի ձևափոխումներով:

«Արևելքն» իր հրատարակության սկզբից հատուկ ուշադրություն հատկացրեց լրատվության ժանրին. նրա ձևերի բազմազանությունը հաճախ կոտրելով լրատվական այն վաղեմի կաղապարները,որոնք ձևավորվել էին հայ մամուլում: Լրատվական անհախընթաց հարուստ հոսքը պահանջում էր նոր ձևեր ու դրսևորումներ, ուստի «Արևելքը» գործի էր դնում լուրերի համառոտ, մի քանի տողից կազմված ձևերից մինչև շատ ավելի ընդարձակ լուրեր ընդգրկող լրատվություն: Օսմանյան Թուրքիայի, նրա տնտեսությանն ու քաղաքականությանը վերաբերող լուրերից մինչև Կ.Պոլսի և Արևմտահայաստանի ազգային, մշակութային ու հասարակական կյանքին, արևելահայ իրականությանը և այլնին առնչվող ամենատարբեր լուրերը: Թերթն այս լուրերը դասակարգում էր տարածական ու թեմատիկ կտրվածքներով, ըստ ինքնուրույն և թարգմանական ընդհանրության նյութերի: 1880-ական թթ. «Արևելքը» լուրերը մատուցում էր կայուն խորագրերով, ինչպիսիք էին «Քաղաքական լուրեր», «Ազգային լուրեր», «Ներքին», «Արտաքին», և այլ ավանդական խորագրերը. դրանց կողքին հայտնվել էին նորերը «Գավառական լուրեր», «Գավառական սուրհանդակ», «Այս ավուր սուրհանդակեն քաղված լուրեր», «Արարատյան սուրհանդակ», «Ռուսական սուրհանդակ» և այլն: Շաբաթական լրատվությունը «Արևելքը» հանրագումարի էր բերում համառոտ շաբաթական տեսություններում: Այս կամ այն տարբերություններով, որոնք հիմնականում «Մասիսի» շաբաթական պարբերականության արդյունք էին, «Մասիսը» ևս հիմնականում կրկնում էր «Արևելքի» խորագրերը («Ազգային լուրեր», «Գավառական լուրեր», «Ռուսական սուրհանդակ», «Կովկասյան սուրհանդակ»), որ ակնհայտորեն ցույց էր տալիս «Արևելքի» և «Մասիսի» լրատվական թողարկումների որոշակի նույնությունը. երկու պարբերականներին էլ աշխատակցում էր հիմնականում միևնույն խմբագրակազմը:

Իրենց կայուն տեղն ունեին նաև «Արևելքի» լրատվական խորագրերը: Առաջին էջում սովորաբար զետեղվում էին քաղաքական լուրերը, երկրորդ

էջում վերջին լուրերը, որոնց հետևում էին ազգային և ներքին լուրերը: Այս էջում հաճախ տեղ էր գտնում նաև համառոտ «Հեռագրալուրքը» կազմված մի քանի տողից: Երկրորդ ու երրորդ էջերում շրջանառում էին ավելի ընդարձակ «Գավառական սուրհանդակի» նյութերը: «Արևելքի», ինչպես և «Մասիսի» լուրերը, միշտ չէ, որ պահպանում են լրատվական ոճի միօրինակությունը. երբեմն շարադրվում են սոսկ փաստերը, երբեմն դրանց կցվում է կամ նկարագրությունը կամ էլ մեկնաբանությունը: Վերջինս կախված էր լուրի կարևորությունից, ինչպես և այն բանից, թե որքանով էր «Արևելքը» կարևոր համարում տվյալ փաստը կամ իրողությունը:«Արևելքում» համեմատաբար ընդարձակ են «Գավառական լուրերը» , որտեղ լրատվությունն ի հայտ է գալիս ոչ միայն փաստերի շարադրանքով, այլև դրանց հետևանքների բացահայտմամբ,որ վերածվում է լրատվական մեկնաբանության: Այսպես, նկարագրելով Չարսանճեգաի հայության կեղեքումները քրդական աշիրեթների կողմից, լուրերից մեկում ցույց է տրվում, միաժամանակ, կեղեքվածների իրավազրկությունը, որի հետևանքով նրանք հարկադրված են գաղթել[1]: Փաստերին հետևում է հետևանքների ցուցադրումը:

«Մասիսը» լրատվությունը մատուցում էր տվյալ թվի վերջին էջում (էջերում) «Քաղված շաբաթական լրոց» «Ներքին», «Ազգային», «Արտաքին» և այլ խորագրերի ներքո: Այստեղ ևս լուրը հայտնվում է փաստական կամ նկարագրական շարադրանքով: Հետաքրքիր է նույն «Մասիսի», «Արձագանք» խորագրով լրատվությունը, որ ընդգրկում էր շաբաթական լուրերի մի ամբողջ հավաքածու դրանց արձագանքելու իմաստով: Այս թերթը ամենատարբեր լուրեր էր թողարկում «Օրագիր» խորագրի ներքո,որոնց միավորում էր ժամանակագրական ընդհանրությունը: Որպես օրաթերթ, «Արևելքը» չուներ այս խորագրերը: «Մասիսը» դրանցից օգտվում էր իր շաբաթական անդրադարձների համար: Որպես գրական շաբաթաթերթ,«Մասիսը» առանձնացրել էր նաև «Գրական սուրհանդակ» խորագիրը,որ տեղեկատվություն էր պարունակում հայ գրականության, մամուլի, թարգմանական երկերի և այլնի մասին:

Երկու պարբերականներում էլ ծավալուն տեղ են զբաղեցնում քաղաքական լուրերը, հատկապես «Արևելքում»: Չգտնելով քաղաքական լուրերի առավել թարմ մատուցման, «Արևելքը» դրանք տպագրում էր «Երեկի սուրհանդակ», «Այս ավուրի սուրհանդակ» խորագրերով, առաջին էջի համապատասխան ծախ և աջ կողմերում: Բնականաբար, «Արևելքի» լրատվական հնարավորություններն ավելի լայն էին, ուստի և թերթը հաճախ էր դիմում թարգմանական ընդարձակ տեսությունների: Այս ժանրը նոր չէր հայ մամուլում:

---

[1] «Արևելք», 1884,1 հոկտեմբերի

Դրա կիրառությանն ենք հանդիպում դեռևս 1840-1850-ական թթ. Վիեննայի մխիթարյանների «Եվրոպա» հանդեսում, որից հետո այն տարածվեց «Արշալույս արարատյան», «Մասիս» (Կ.Ռեյությանի), «Օրագիր» և այլ պարբերականներում: Ժանրային տեսակետից նորույթ չէր նաև «Արևելքի» գիտահանրամատչելի լրատվությունը: Նորույթն այստեղ լրատվական հարստությունն ու բազմազանությունն էր: Այս բաժինը գլխավորում և հիմնականում հեղինակում էր Հ. Յուսուֆյանը, որի երկար տարիների աշխատանքն «Արևելքում» պետք է չափել գիտությունը ժողովրդականացնելու նրա լուրջ վաստակով:

Չպետք է թերագնահատել «Արևելքի», հետագայում նաև «Մասիսի» ջանքերը արդի ռեպորտաժին մոտ (կամ դրա նախատեսակը) ժանրը զարգացնելու գործում: «Արևելքում» այս ժանրով է լուսաբանվում Ազգային ժողովի նիստերի ընթացքը և մթնոլորտի նկարագրությունը, որ հագեցած է լրագրողական գնահատումներով:Այդպիսիք են «Արևելքի» 1889 թ. նոյեմբեր-դեկտեմբերի թվերում տպագրված չարագործ Սուսա բեկի դատավարությունը լուսաբանող հրապարակումները: Այս հրապարակումներում լրագրողը հանդես է գալիս իբրև ներկայում ընթացող իրողությունը ներկայացնող ու գնահատող (թեև շատ զուսպ) հեղինակ: Լուսաբանումներն արվում են վկաների բավական տպավորիչ խոսքերում, որն ընթերցողին առաջնորդում է նախ դատարանի դահլիճ, ապա բուն գործողությունների վայրը, ստեղծում ներկայի մտապատկեր:

«Մասիսում» ռեպորտաժի բնույթ ունեն Ա. Արփիարյանի մի քանի հրապարկումները: Նրա «Խորհրդարանին շուրջը» նյութը կառուցված է սեփական ընթացիկ դիտարկումների վրա, նկարագրվում է Ազգային ժողովի սրահը, որտեղ մեկը մյուսի հետևից իրենց առանձնահատուկ կեցվածքով հայտնվում են երեսփոխանները: Արփիարյանը ստեղծում է ներկայության պատրանք այսրոպեական կեցվածքի մեջ ցուցադրելով հանրահայտ անձանց: Իրենց բնութագրական գծերով են պատկերված Հ. Մերեեմ-Գուլին, Նար-Պեյը, Տ. Յուսուֆյանը, Մ. Խրիմյանը, Ստ. Փափազյանը և այլք: Ահա և նիստին անմիջապես նախորդող ռեպորտաժային տեսարանը. «Երեսփոխան էֆենտիք իրենք զիրենք կնետեն կեղտոտ, ծուռումուռ, չոր փայտե նստարաններու նմանող բաներու վրա...Ատենադպրի աթոռին վրա նստած է եգիպտական մումիա մը Տամատյան էֆենտի»[2]:

«Արևելքում» և «Մասիսում» շատ չեն ռեպորտաժի այսօրվա ըմբռնումներով ժանրին մոտ այս հրապարակումները, բայց նկատենք, որ լրատվական այս ժանրի մշակումները առկա են 19-րդ դ. վերջին քառորդին տպագրվող արևմտահայ մամուլում:

---

[2] «Մասիս» ,1887, թիվ 3871, էջ 134

Խնդրո առարկա պարբերականներում բացառիկ կարևոր տեղ է զբաղեցնում թղթակցության ժանրը: Թղթակցությունները նույնպես պարունակում են հարուստ լրատվություն և իրականացնում թերթի առջև դրված լուրջ խնդիրներից մեկը Արևմտահայաստանի, Կ. Պոլսի, արևելահայ և հայաբնակ այլ վայրերի բնակչության կյանքն իր ամենատարբեր կողմերով լուսաբանելու գործը: Իրենց ընդգրկումներով հատկապես «Արևելքի» թղթակցությունները նորույթ էին արևմտահայ լրագրության պատմության մեջ:ժանրն իր բովանդակային կողմերով ու հրատապությամբ գրավում էր ընթերցողի հետաքրքրությունը: Այս ժանրով էր գրում Արփիարյանը, երբ 1884 թ., որպես «Արևելքի» թղթակից, մեկնեց Կովկաս լուսաբանելու կաթողիկոսական ընտրությունները: Ա. Արփիարյանի այս թղթակցություններին հատուկ են այս ժանրի ամենատարբեր դրսևորումները նկարագրությունը, մեկնաբանությունները, հիմնահարցի մասնակի կամ ընդհանրական վերլուծությունը, զուտ լրատվությունը և այլն: Թղթակցության ոճերի այս բազմազանության մեջ է, կարծում ենք, Արփիարյանի շարադրանքի գրավչությունն ու ընթերցողին հետաքրքրելու կարողությունը: Անշուշտ, Արփիարյանի վերլուծումները բխում են նրա գաղափարական դիրքորոշումից, սակայն ժանրի հնարավորությունների լայն օգտագործումը սկսած երևույթի փաստական կողմից և վերջացրած համոզիչ դատողություններով, հեղինակի գաղափարական ուղղվածությունը մղում են հետին պլան, այն դարձնում աննկատելի: Թղթակցության ժանրի մեջ Արփիարյանը հանդես էր բերում լրագրողի անհատական մոտեցման ու ընկալումների կարևորությունը, որ ամրապնդվում էր փաստերի առաջնայնության գիտակցությամբ: Ավելացնենք, որ նա թղթակցությունը հասցրեց լրագրական գեղարվեստական ժանրի մակարդակին արևմտահայ զարմացած ընթերցողի առջև պարզելով արևելահայ իրականության, գործիչների կենդանի և հույժ տպավորիչ նկարագիրները: Սա արդեն նորույթ էր նշված ժանրում, ճիշտ այնպես և այն, որ այս թղթակցություններում կարևորվում է օբյեկտի իրապատում բնույթը, իրականության, միջավայրի ու մարդկանց ճշմարտացի պատկերումը: Դա «Արևելքի» ու «Մասիսի» նոր լրագրության (Զոհրապի բնորոշումն է) ամենակարևոր սկզբունքներից մեկն էր, որի նպատակն էր իրականության ճշմարտացի վերարտադրությունը: Հենց այս ոճն էր, որ ուղղորդում էր «Արևելքի» և «Մասիսի» գավառական թղթակիցներին, մղում նրանց իրական միջավայրում և փաստականորեն հագեցած նյութով ցույց տալ հայ գավառացու կյանքն ու կենցաղը, մտավոր ու հոգևոր մակարդակը:

«Արևելքում» և «Մասիսում» նոր որակներ ձեռք բերեց անեկդոտ ժանրը: Այստեղ ուշադրություն է գրավում հետաքրքիր գրելաձևն ու ոճական բազմազանությունը: Սակայն «Արևելքն» ավելի հակում ունի դեպի ուղեգրական

ակնարկները, որտեղ նկարագրությունները զուգորդվում են լրատվական նյութով ու համառոտ վերլուծումներով: Ուղեգրական ակնարկի այդպիսի նմուշներ են Գր. Զոհրապի, Մ. Չերազի, Տ. Արփիարյանի և Ա. Ֆեթվաճյանի հրապարակումներն «Արևելքում»: Մ. Չերազի, «Առաջին ուղևորությունս Եվրոպայի մեջ» ակնարկաշարը այն ժամանակների տպավորությունների գրառումներն են, երբ հեղինակը ուղեկցել էր Մ. Խրիմյանին Բեռլին 1878 թ., կոնգրեսին հայերի խնդրագիրը հանձնելու: Համիդյան գրաքննության սպառնալի ուշադրության վտանգը իր կնիքն է դրել այս ակնարկաշարի վրա, այն դարձել է ինքնանպատակ և թերի, որովհետև չունի ոչ բնութագիր, ոչ վերլուծություններ և Չերազի տպավորիչ ոճը հագիվ թե հուզեր ընթերցողին: Նունը չի կարելի ասել Տ. Արփիարյանի ուղեգրական ակնարկների մասին: Նրա ակնարկներում ևս, ըստ երևույթին, ավագ եղբոր Ա. Արփիարյանի ազդեցությամբ, առկա է էսսեանման թեմատիկ ու նկարագրական թռուցիկ այլազանությունը: Ի տարբերություն Մ. Չերազի, նա ստեղծում է շարժուն և գործողության մեջ ցուցադրվող կենդանի դիմանկարներ (Պողոս Նուբար փաշան, իբրև ինժեներական տաղանդավոր մտահղացումների հեղինակ, Մ. Մամուրյան լայնախոհ մարդն ու մտավորականը և այլն[3]):

Իտալական կյանքի, վերածննդի կոթողների ու պատմագեղարվեստական այլ արժեքների վերաբերյալ առանձնանում են Ա. Ֆեթվաճյանի ուղեգրական ակնարկները, որոնք ժանրի հնարավորությունների, առավել ևս ձևի տեսակետից շատ բան չեն ավելացնում վերն ասվածին , թեև նպատակասլաց են և դյուրմատչելի:

Սկնարկի ժանրը գեղարվեստական նրբության հասցրեց Գր. Զոհրապը Զմյուռնիայի հայ գաղթօջախին նվիրված իր հրապարակման մեջ: Զոհրապը գործածում է թանձր հակադրությունների գրելաոճ և այս հակադրություններն են, որ կողմնորոշում են ընթերցողին, այն ժամանակ, երբ հեղինակը ծեռնպահ է մնում կտրուկ խոսքից: Զմյուռնիայի վիճակում է , որտեղ գործում է «առաջնորդ մը , որու համբավը զաշխարհ կթնդացնե (նկատի ունի Մ. արք. Մուրատյանցին- Գ. Խ) ու անդին հալածական գրագետ ու լրագրապետ մը ցավոց ու տառապանաց մահճին վրա մոռցված»[4]: Զոհրապի լրագրության ուժը նրա անկեղծության ու անմիջականության մեջ է: Զմյուռնահայ վերնախավի օտարասիրությունն ակնարկելով, նա նկատում է, որ տեղի վարժարաններն ավելի

---

[3] «Արևելք» , 1888, 26 հոկտեմբերի, 1889, 7 օգոստոսի և այլն:

[4] «Մասիս» 1887,թիվ 3858,էջ 29-30:Զոհրապը ի նկատի ունի «Արշալույս արարատյանի» վերջին խմբագիր Հ. Սվաճյանին, որը այն օրերին, երբ Զոհրապը Զմյուռնիայում էր, գտնվում էր «մահվան մահճում» (տես Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., էջ 106-107):

շատ փայլ ունեն դրսից. «ապաքեն արտաքին տեսքի հոգածությունն իզմիրցվոց հիմնական հանգամանքն է[5]»: Նույն անբռնազբոս գրչով նա պատկերել է 1850-ական թթ. Պեշիկթաշի Մաքրուհյան վարժարանը, դպրոցական բարքերը, այն ժամանակների թատրոնի անսահմանորեն միամիտ ու սրտացավ հայ հանդիսատեսին: Զոհրապի ակնարկների մյուս առանձնահատկությունը սահուն դիտարկումների վրա հենվող ընդհանրացումներն են, մեղմ հումորը երեսնամյա վաղեմության միջավայրի ու մարդկանց նկատմամբ, խաղաղ հայեցվածքը երևույթներին, որը խորքում պահպանում է ինչ-որ մի թաքուն տագնապ, դրամա հար և նման իր սքանչելի նովելների ոճին:

«Մասիսում» դիմանկարային ակնարկը ցայտունորեն առանձնանում է Ա. Արփիարյանի այս ժանրերի գործերի շնորհիվ: Արփիարյանի հերոսները ոչ թե որոշակի ու իրական դեմքեր են, այլ հավաքական կերպարներ բնավորության կամ կեցվածքի ցայտուն հատկանիշներով («Պոլսական դեմքեր» շարքը): Արփիարյանի այս ակնարկներում զավեշտը հանդես է գալիս թանձր որակներով, հատկապես, երբ խոսքը վերաբերում է պոլսահայ իրականությունը ամենևին չճանաչող արևելահայ մի լրագրողի կերպարին («Արվեստահանդես գնացող կովկասցին»): [6]

Գեղարվեստական ակնարկի ժանրը իր սոցիալական սուր հարցադրումներով և անողոք ճշմարտացիությամբ, հաջողությամբ ի հայտ է եկել Մ. Կյուրճյանի (Հրանդ) հրապարակումներում: «Պանդուխտի կյանքեն» խորագրով այս ակնարկներում Կյուրճյանը ժանրը օգտագործում է չափի զգացումով, պանդուխտ գավառացին ցուցադրվում է միջավայրի և գործողության մեջ, հեղինակային հիմնավորված շեղումներով: Նրա ոչ քիչ ակնարկներ իրենց ամբողջականությամբ և սյուժետային (թեկուզ և զուսպ) զարգացումներով մոտենում են նորավեպի ժանրին առավել փխրուն դարձնելով ակնարկի և նորավեպի սահմանները:[7]

«Արևելքում» և հատկապես Ա. Արփիարյանի հրապարակախոսության մեջ իր հետագա զարգացումն ապրեց և կատարելագործվեց քրոնիկի ժանրը: Այս ժանրով հաջողությամբ գրիչ էին շարժում դեռևս 1870-ական թվականներից Մ. Մամուրյանը («Արևելյան մամուլում») և Ե. Տեմիրճիպաշյանը 1880-ականին («Երկրագունտ»): Սակայն Ա. Արփիարյանը ժանրին տվեց առանձնահատուկ ուղղվածություն և ձև: Չևի տեսակետից նրա քրոնիկները ոչ ծավալուն

---

[5] «Մասիս» , 1887, թիվ 3858, էջ 30: Տես նաև Շարուրյան Ա. , Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն: Ե., 1996, էջ 40:
[6] «Մասիս», 1889, թիվ 3926,էջ 43-48
[7] Տես «Մասիս»,1888, թիվ 3919, էջ 22-24, թիվ 3921, էջ 50-53, 1889, թիվ 3924, էջ 14-16 և այլն

շարադրանք են, միավորում են ամենատարբեր թեմաները, որոնք ունեն մի ընդհանրություն. դրանք ունեն հրատապ նշանակություն պարունակող երևույթներ ու փաստեր, որոնք մեկնաբանվում են հեղինակի կողմից: Այլ կերպ ասած, քրոնիկը յուրահատուկ լրագրական ժամանակագրություն է, սուբյեկտիվ ուղղվածությամբ, որտեղ առաջնային արժեք են ստանում հեղինակային վերլուծություններն ու գնահատումները: Իր թեմատիկ ընդգրկումներով քրոնիկը Արփիարյանին տալիս է ոչնչով չսահմանափակված ազատություն. իսկ մեկնաբանության ազատությունը այդ ժանրը դարձնում է գրեթե ունիվերսալ: Արփիարյանը քրոնիկը ձևավորում է հրապարակախոսական և գեղարվեստական բաղադրամասերով, ընդ որում, զուտ ժանրային իմաստով այն «կլանում է» այլ լրագրական ժանրեր և նորույթ, և ակնարկ, և գրաֆիոսական և այլն: Ա. Արփիարյանը «Արևելքում» և ապա «Մասիսում» քրոնիկի ժանրը մեծ հաջողությամբ զարգացնում էր «Օրվա կյանքը» խորագրերով հրապարակումներում (Հոլազոլ ստորագրությամբ): Այս ամենով հանդերձ, Արփիարյանի քրոնիկներում միշտ կարևորվում է լրատվական հենքը, արդեն փոքր-ինչ նստվածք տված լուրը, որը մի հայտնի չափով արդեն հասունացած էր հեղինակային մտորումների կամ վերլուծումների համար: Արփիարյանի քրոնիկներն ունեն լայն տարածականություն. դրանք վերաբերում են պոլսահայ կյանքի երևույթներին, ազգային վարչական, կրթական հաստատություններին, ընկերություններին, հոգևորական դասին, մտավորականությանը և այլն: Մեկ թեմայից մյուսին անցումը նա կատարում է կամ նախապատրաստելով նոր թեման, կամ միանգամից հենվելով ժամանակագրական ընթացքի ու տրամաբանական ներքին կապի վրա: Թեմաների առատությունն ու բազմազանությունը, դրանց նկատմամբ Արփիարյանի թարմ ու անսպասելի մոտեցումները ապահովում էին նրա քրոնիկների հանդեպ ընթերցողի լարված հետաքրքրությունը: Հարկ է առանձնացնել որոշ քրոնիկների բանավիճային ուղղվածությունը, ինչպես, օրինակ, Սամուրյան-Շահնուրի դեմ Արփիարյանի մղած բանավեճը: Դրա հիմքում ընկած էին ազգային իրականությանմամուլի հասարակական դերի, Ռուսաստանի նկատմամբ տարբեր դիրքորոշումները, տարբեր վերաբերմունքը էջմիածնի և առհասարակ եկեղեցու դերի վերաբերյալ: Հարկ է նշել, որ բովանդակության առումով տարբերություններ կան «Արևելքի» և «Մասիսի» արփիարյանական քրոնիկների մեջ: Նախ, «Մասիսի» քրոնիկներում զգալի չափերի են հասնում հումորն ու երգիծանքը: Արփիարյանն ունի երգիծելու ակնառու շնորհ, այն, անշուշտ, չի կարող հասնել արևմտահայ դասական երգիծանքին (Հ.Սվաճյան, Հ. Պարոնյան, Ե. Օտյան), սակայն զուրկ չէ ծիծաղելին հայտնաբերելու և ցուցադրելու վարպետությունից: «Մասիսի» քրոնիկների մյուս առանձնահատկությունը քննադատական սրությունն է, որ ավելի

ընդգծված դրսևորումներ ունի համեմատած «Արևելքի» հրապարակումների հետ: Այստեղ Արփիարյանի քննադատության թիրախն են դառնում հասարակական անտարբերությունը, Ազգային ժողովը, պատրիարքը և այլն: 1890 թ. Արփիարյանը փորձեց «Մասիսում» վերսկսել «Օրվան կյանքը», որ դադարեցրել է մեկ տարի առաջ 1889 թ.: Դրան խանգարեցին նրա լարված հարաբերությունները «Արևելքի», վարչության հետ: Այսուհանդերձ,«Մասիսում» նա հրատարակեց «Պարահանդեսի բոլորտիքը» և «Տխմարի մը հուշատետրը» վերտառությամբ քրոնիկները:[8] Արփիարյանի քրոնիկները իրենց ազդեցությունն են թողել ժամանակի լրագրության վրա, որ կարելի է տեսնել նույն «Արևելքի» էջերում: Նկատի ունենք Հրանդի քրոնիկների շարքը «Արևելքի» 1888-1889 թվահամարներում՝ «Վառարանիս քով» ընդհանուր խորագրի ներքո:[9] Հրանդի այս գործերը Արփիարյանի քրոնիկներին զիջում են, սակայն, իրենց ընդգծված զգացմունքայնությամբ և անհատական ապրումների գերակայությամբ:

Ժանրային ինքնատիպ կառուցվածք ունեն «Արևելքում» և «Մասիսում» Ե. Տեմիրճապաշյանի հրապարակումները (Մելանիա, ստորագրությամբ): Չնով դրանք մի կողմից նման են նամականու (Մելանիան գրում է իր ընկերուհի Նուրանիային) և մյուս կողմից օրագրական գրառումների, որովհետև միշտ գրում է Մելանիան առանց ընկերուհու պատասխանների:Այուժետային հատվածայնությամբ, տարբեր թեմաները ընդհանուր ձևի մեջ ամփոփելու կառուցվածքային հատկանիշներով Ե. Տեմիրճիպաշյանի «Աղջկան մը նամակները» (երբեմն «Աղջկան մօրագիրը») կարելի է համեմատել Արփիարյանի «Օրվան կյանքը» քրոնիկների հետ: Սակայն մեկ կարևոր տարբերությամբ. եթե Ա. Արփիարյանի և սյուժեն, և դրա շուրջ հեղինակային մտորումները իրատեսական, սթափ դիտարկումների արդյունք են, անցումները մեկ սյուժեից մյուսին հիմնավոր և պատճառաբանված, ապա Մելանիայի օրագրական գրառումները ունեն քմահաճ զարգացումներ, իրականի կողքին հանկարծ հայտնվում է խիստ անձնական բնույթի հոռետեսական տրամադրությունը և հաճախ միստիկական մտորումը: Դրանով հանդերձ, Մելանիայի նամակներում քիչ չեն հրապարակախոսական անմիջական ու տպավորիչ խոսքը, ցայտուն բնութագրերն ու քննադատական խորաթափանց հայեցվածքը:

---

[8] «Մասիս», 1890, թիվ 3932, էջ 149-151, թիվ 3940,էջ 278-280

[9] «Արևելք», 1888, 19 նոյեմբերի, 12, 31 դեկտեմբերի, 1889, 28 դեկտեմբերի և այլն